

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են, որ Արևմտական վար-դապետը կանչված է Եմիլիանի և պետք է էլ չը վերադառնալ Շուշի, իսկ նրա տեղը նշանակված է Գրիգոր վարդապետը, որի ազգանունը նամա-կագիրը չէ հաղորդում և որին խաղաղասէր է անուանում:

Նոյն տեղից հաղորդում են, որ «Պատկ» լրագիրը հրատարակվելու է փետրվարի 5-ին խմբագրու-թեամբ Շուշու ուսումնականների տեսուչ Վասակ Բաբայանի միջոցով: Լրագրի տարեկան բաժանորդա-գիրը հինգ լուրջ է լինելու:

Երևանից հաղորդում են, որ անգղայի երկուս-տարեկները դիտարկություն ունեն մի քանի ներ-կայացուցիչներ տալ բարեգործական նպատակով: Այդ միտքը, առկայությամբ է նամակագիրը, տվեց մեր երկրասարդներին պ. Արմենակ Մեկեմբ:

ԲԱՎՈՒՅԳ գրում են հետևյալը՝ Անցեալ ամսի վերջերս աղքատ ուսումնականների տեսուչ տե-ղացի երկուստարեկները ներկայացրին «Վարդան Մանվելյան» ողբերգությունը, «Անիտոլոգիան» փոքրիկը և «Շուշույի» ողբերգությունը վերջին գործողությունը: Ներկայացումը առհասարակ լա-զուց, մանաւանդ լա-կատարեց Շուշույի դերը տ. Կատարին: Արդարանալով, որ մասնակցում է Բաբայան եղած բոլոր հասարակական գործերին, Բաբայան, որ տիկինը գեղեցիկ ներկայացրեց Շուշույի դերը, այդ կրօնական համագործակցի համար նահատակվող կնոջ դերը, նա օգնեց թա-րօնասերներին զանազան պիտույքներ հասցնելով:

«ԲԱԲԱՅՆ» լրագրին Ստամբուլից հաղորդում են կանափի արդիւնաբերությունների մասին հետևյալը մի երկու տարի առաջ Նիդերլանդական պետե-ղացի և տեղացիներից մի կտոր վարելահող առել, որտեղ կանափ են ցանել: Կանափի վրա ունեցած հսկողությունը երկուս էր, որ հայերը մտադիր չէին դրանից թելեր չինել: Երբ կանափը հաս-նում է, տակից կտրում են, թողնում են մի քա-նի օր չորանալու և յետոյ պահում են քամուց պաշտպանված մէկ սենեակի մէջ: Չմեղը սկսում են կանափի տերները և սերմերը կապերտների վրա արօղել, յետոյ կապերտից թափում են թողը և դրան երեք կերպ մաղբուց, ուղարկում են Ալեքսանդրիա: Ասում են, որ այդ թողից չինում են խմոր և գնդակներ ձևով ձիւղում են թուխու-նի հետ: Նա աղբում է օպիումի պէս:

Ընթերցողի ուշադրությունը դարձնում ենք «Մշակի» այս համարում տպված խմբագրին ուղ-ղած նամակի վրա: Պ. պ. Գարոյ և իւնիստ յայ-տում են «Մշակի» ընթերցողներին, որ այլ ևս զրկու չեն մեր լրագրում, երբի այն նպատա-կով որ այն բաժանորդները որոնք գրվում են «Մշակին» միայն Գարոյի և իւնիստի գրված-ները կարդալու համար (եթէ այդպիսիներ կան), էլ չը գրվեն մեր լրագրին...

«Մշակի» էգոցվայ № 8 մէջ սկսում ենք տպել մի վէպ «Այնտեղ և Այստեղ» վերնագրով:

Ա.Լ.ԲԱՍՏԱՆԻՍԳՐԱՊՈՒՅԳ յունվարի 20-ից մեզ գրում են որ այդտեղ տիֆ աված ցաւ օրից օր աւելի աստվանում է: Գարոյը Ալեքսանդրապո-լում խոտ է և օրերս 3/4 արշին խորութեամբ ձիւն է եկած

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալիայի նորընտիր թագաւորը Ռուբենտ I, վախճանած թագաւորին Վիկտոր-Էմմա-նուէլի որդին, ծնած է Տուրին քաղաքում 1844-ի մարտի 14-ին: 1658-ին սեւած է զե-նուորական ուսումնով պարսպել և նոյն տա-րին կապիտան եղած է Պիզանիի Բրիգադայի հետեակ զօրքի երրորդ գումդի մէջ: Հետզ-հետէ բարձրացաւ մայորի աստիճան 1860-ին, փոխանորդ-գնդապետի (lieutenant-colonel) աստիճան 1862-ին և նոյն տարին հեծեա-զօրքի երկրորդ բրիգադայի հրամանատար գե-ներալ-մայորի աստիճանը բարձրացաւ, իր

ընդը Մարիա-Պիան Պորտուգալի թագաւոր Լուի I-ի հետ ամուսնացած ժամանակ: 1866-ին Իտալիայի և Աւստրիայի պատե-րազմի ժամանակ փառաւոր գործեր կատա-րեց Կուստոցայի ճակատամարտի մէջ և չը թողեց որ իտալական բանակը յետ մղած ժամանակ, անկարգ կերպով ցլր ու ցան փախչէ:

Նրկու տարուց յետոյ, 1868 ապրիլի 22-ին, Տուրինի մէջ ամուսնացաւ իրա ազգականնե-րից Գեոնովայի գուքսի աղջկան, Մարգրիտ դը Սալոպայի հետ, որ ծնած է 1851-ի նոյեմբերի 20-ին:

Հռօմ Իտալիայի հետ միանալուց քիչ ժա-մանակ յետոյ, Ռուբենտ իշխանը Հռօմ ու-ղարկեցաւ մի զօրաբանակի հրամանատարի պաշտօնով: Յանձնված էր նաև իրան մի տե-սակ առժամանակեայ կառավարութիւն հաս-տատել այնտեղ, մինչև որ արգելալէք փոխա-դրվի իտալական այդ նոր մայրաքաղաքը:

1871-ին ճանապարհորդեց Սպանիա որի թագաւոր եղած էր իր Ամեդէ եղբայրը: Հե-տեալ տարին գնաց Բերլին, Մարգրիտ իշ-խանուհու հետ:

Այս վերջին ճանապարհորդութեան ժա-մանակ որին շատ մեկնութիւններ տուին զիպ-լմանտիական շրջանները մէջ, կնքահայր եղաւ Վիլհելմ կայսրի թոռնիկից մի աղջկայ և պրուսական հուսար կոչված հեծեազօրքի 13-դ բանակի պատուաւոր գնդապետի տիտ-ղոսը ստացաւ:

Մարգրիտ իշխանուհուց ունեցած է մի որդի, Վիկտոր-Էմմանուէլ-Ֆերդինանտ անու-նով, որ ծնաւ 1869 նոյեմբերի 11-ին և ծնած ժամանակ նապօրի իշխանի տիտ-ղոսը ստացաւ:

ԱՆԳԼԻԱ

«Times» լրագիրը զգուշանում է անգլիա-կան կառավարութեան, ցոյց տալով նրան թէ որչափ վտանգաւոր է արեւելեան խնդրի մէջ առանձին քաղաքականութեան միայն հետեւել և թէ Աւստրիան էլ որ այդ խն-դրի մէջ հողային մեծ շահեր ունէ, մեծ խոհեմութեամբ համաձայնեցրել է իր շա-հերը եւրօպական միւս պետութիւնների շա-հերի հետ:

Այդ յօդուածը որ կը ցոյց տայ Անգլիայի ազատական կուսակցութեան քաղաքականու-թիւնը արեւելեան խնդրի մէջ, արժան ենք համարում նրա մի քանի մասերի հետ ծա-նօթացնել մեր ընթերցողներին:

«Անգլիական կառավարութիւնը ստուգիւ-չէ՞ցը է: Նա որոշած է միւս պետութիւն-ների նման այն ժամանակ միայն միջամտել երբ հարկաւոր լինի իր վտանգված շահերը պաշտպանել կամ թէ մեր միջնորդները գե-որնում են այնպիսի միջոցներ որ յաջողին այն տեսակ առանձին միջամտութիւն անել արեւելեան խնդրի մէջ որ օսմանեան տէրու-թեան նպատակաւ լինի:

«Կարելի է այդ հարցը աւելի պարզ չ' ու առաջարկել այսպէս. Միթէ պատահել են այնպիսի դէպքեր որ մեր կառավարութիւնը փորձ փորձէ առանձին գործել, փոխանակ համաձայնութեամբ գործելու միւս տէրու-թիւններին հետ որոնք շահ ունեն արեւելեան խնդրի մէջ:

«Ձը մոռանանք որ Աւստրիային իր համար որոշած քաղաքականութիւնը բացարձակա-պէս նման է այն քաղաքականութեան որ լրջը Դէրբին հանդիսաւոր կերպով խոստացել է պաշտպանել:

«Աւստրիան էլ շահեր ունէ այն երկիրներին մէջ և այն ծովերի վրա որոնք սահմանակից են Թիւրքիային. շահեր՝ որոնք աւելի հարկաւոր են, եթէ չափեց աւելի կենսական, քան թէ մեր շահերը: Ո՞վ կարող է աւել թէ աւա-րիական տէրութեան պաշտօնականը մո-ռանում են այդ շահեր և կամ արհամար-

հում են: Բացի արանից, Աւստրիան ամեն յարմար առիթներ ունեցաւ ուսական բա-նակի գործողութիւններին փնտել, երբ սա-րուսական սահմանադրու ռաք կոխեց: Միթէ չէր կարելի որ Աւստրիան իր զօր-քերը հանէր ուսական բանակի դէմ և արգելէր նրան Դանուբի առաջ, յայտարարե-լով թէ նախանձով է նայում ուսական բա-նակի առաջադիմութիւններին:

«Աւստրիան կարող էր միջամտել աւելի զիւրին կերպով և աւելի քիչ վտանգի տակ զցելով իրան քան թէ մենք: Բայց նա պար-տաւոր չը համարեց իրան իր տեղից շարժ-վել:

«Նա մերժում է միջամտել Ռուսաստանի և Թիւրքիայի պատերազմին, մինչև որ հարցը թիւրք տէրութեան պաշտպանութեան է վե-րաբերվում: Նա ապահով է թէ երբ կարգը գալիս է որոշ կերպով կանոնաւորել հարցը, այն ժամանակ իր շահերը այնչափ աւելի լա-կերպով կը պաշտպանվեն, որչափ որ ինքն սպառած չէ եղել իր ոյժերը, թիւրքերի յու-սահատական դատը պաշտպանելով:

«Երբ Դէրբին որոշածը Անգլիայի քաղա-քականութեան համար՝ ահա այս դրութիւնն է իր ամեն կէտերով: Մենք էլ ստիպված ենք չը միջամտել Ռուսաստանի և Թիւրքիայի, միայն պահպանելով մեր իրաւունքը, հար-կաւոր եղած ժամանակ պաշտպանելու այն մի քանի տեղեր որոնք արդէն որոշել ենք: Ուրեմն թէ մեր կառավարութիւնը և թէ Աւստրիան մի և նոյն դրութեան մէջ լինե-լով, կարելի է որ կատարեալ համաձայնու-թիւն լինի մեր մէջ:

«Փորձը հիմքից քննելով, կարող ենք ասել թէ Աւստրիայի հետ համաձայնելը հաւա-սարապէս Դերմանիայի հետ համաձայնելին է: Ուրեմն ոչինչ պատճառ չը կայ որ եւրօպա-կան տէրութիւնների մէջ ճշմարիտ համա-ձայնութիւն չը լինի վէճի տակ եղած խն-դիրների վերաբերութեամբ:

Դերմանիան և Աւստրիան շատ աւելի մեծ շահեր ունեն քան թէ Անգլիան այն հար-ցերի մէջ որոնց համար անհաղար խօսում են մեզ հետ և ստիպում են մեզ ընդունել և որոնք վերաբերում են ուսական աղբեցու-թեան տարածելուն:

«Երաւի, պ. Ֆորստեր չէ չափազանցել իր խօսքերի մէջ երբ ասել է թէ Անգլիան իր սեփական մասնաւոր շահեր չունէ ուսաները Կ. Պօլսից հեռու պահելու մէջ անգամ: Այդ աւելի վերաբերում է Աւստրիային և Դերմա-նիային: Անտարակոյց այդ երկու տէրութիւն-ները հաճութեամբ հանդիսատես կը լինեն մեր ներկայացրած տեսարանին, եթէ մենք ուղեւայելի կուէլ իրանց շահերը պաշտպա-նելու համար, և մեր փողով և մեր արիւ-նով ազատել նրանց անձամբ, իրանց դատը պաշտպանելու աշխատութիւնից:

«Բայց յոյս ունենք որ այնչափ կոյր չենք լինի որ Դոն-Վիլլիլթի նման գնանք զցենք մեզ այդպիսի փորձանքի մէջ:

«Երբ Անգլիային խորհուրդ տրվի իր չէ-զըզութիւնից դուրս գալ, հարկաւոր կը լինի լուծել այս հարցը. Անգլիան բոլորովին առան-ձիւն պիտի գործէ, ուրիշ զանակից չունենա-լով բացի Թիւրքիայից: Եթէ մի քանի պա-տահարներ մեզ զցենքի պատերազմի մէջ Թիւր-քիայի օգտին համար Ռուսաստանի դէմ, եւրօպական և ոչ մի տէրութիւն մեզ կողմ-նակից չենք ունենայ, և եթէ յաղթութիւնը մեր կողմ մնար անգամ, պատերազմից յետոյ մենք կը մնայինք առանձին օսմանեան տէրու-թեան հետ և արեւելեան խնդրը ծանրացած մեր թիւերի վրա: Այն ժամանակ ահա հար-կաւոր կը լինել մեզ այդ Թիւրք տէրութեան հետ գործ ունենալ:

«Ուրեմն, մեր այդպէս առանձնանալը, այդ-չափ ծանր պատասխանատուութիւններ մեր վրա առնելը, ուրիշ հետեանք չի ունենալ, հենց ամենայնով դէպքերի մէջ էլ բայց

միայն զուր տեղ սպառել մեր ոյժերը: Այս-պիսի ժամանակ հարկաւոր է մի խելացի կառավարութեան աշխատել որ չէզոք տէ-րութիւնների մէջ վերահաստատվել համա-ձայնութիւնը որ զփաղդապէս երկու տա-րուց աւելի է որ խախտված է:

«Հարկաւոր է վստահութիւն տալ միւս տէրութիւններին թէ մենք մի այնպիսի հաս-տատ որոշում արած ենք որ յետ չենք առ-նել և ոչ մի կերպով: Զէ կարելի ուրանալ թէ այս վերջին ժամանակներ մեր քաղաքա-կանութեան վերաբերութեամբ տարածված լուրերը նիւթական մեծ փաստ ունեցին մեր երկրի շահերին և այդ թէ ներքին և թէ արտաքին կերպով:

«Ներքին կերպով առևտուրին փնտելին: Արտաքին կերպով էլ մի ցաւալի քաջալերու-թիւն տուեցին Թիւրքիային, զրգուցին Ռու-սաստանը և հանեցին նոր արգելքներ, միւս տէրութիւնների հետ համաձայնութիւն հաս-տատուելու դէմ:

«Ել բաւական եղաւ որ անգլիական երկիրը զգալի կերպով փնտալէ այն անորոշութեամբ որ ծածկում է լրջ Բիկօնաֆիլիի քաղաքա-կանութիւնը:

«Թող միանգամից ասեն մեզ թէ կառա-վարութիւնը և երկիրը համաձայնվում են լրջ Դէրբին քաղաքականութեան որ Անդ-րալի կոմիտէ և ամեն լուսաւորված պիտա-կան մարդերի քաղաքականութիւնն է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կ. Պօլսի լրագիրների մէջ կարդում ենք թէ աշխատում են համաձայնեցնել հակահա-սունեան և հասունեան կաթօրիկ հայերին: Հը-ռօմի պապը միտք ունէ յատուկ պատգամա-ւոր ուղարկել Կ. Պօլսի որ իր շնորհակալու-թիւնը ներկայացնէ սուլթանին, Հասունեանի Կ. Պօլսի մաները չարգելվելուն և նրա եղած ընդունելութեան համար:

««Presse» լրագրին հեռագրում են Կ. Պօլ-սից որ Ստամբուլում մեծ խռովութիւն է. Սուլ-թանը դիտարկութիւն ունի Բրուսսա փախչել: Հաւատարմատարներին նոր հրամաններ են ու-ղարկված: Հրամայած է Ռուսաստանի բոլոր պահանջները ընդունել: Դուրիշ իր բոլոր զօր-քերով և չէրօգորցնելի հետ միասին պատե-րազմում է Բասթօվիլիների հողի վրա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆԱ 31 (19) Յունվարի: Ս. Պետեր-բուրգի աւստրիական դեսպանը յանձնեց երեկ իշխան Գոյափօվին Վիլհելմի կարկնետի պաշտօնական թուղթը հետեալ բովանդա-կութեան՝ Աւստրիան չէ կամենում խլել Թիւրքիայից նրա իրաւունքը կապել դաշնա-գիրները իր սեփական շահերը աչքի առջև ունելով, բայց մինչև այն ժամանակ նա չէ կարող ճանաչել Կազանիկում կապված պայ-մանները օրինական, եթէ նրանք կերպարա-նափոխում են արդէն եղած դաշնագիրները և դիպչում են Աւստրիական շահերին, — մինչև որ հաստատված չը լինեն նոր պայմա-նագիրներ այն պետութիւնների հետ, որոնք մասնակցել են առաջվայ դաշնադրութիւն-ներին մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 21 Յունվարի գնեկալ Յիմմելման հեռագրում է յունվարի 18. յունվարի 14-ի կուէ հետեանքն այն էր, որ թշնամին յունվարի 15 դիշերը շտապով հեռացաւ Վարնա: Յունվարի 15-ին առաջ-նակարգ հեծեազօրքի մասներով եւ մնայ Բալարճիկ, որտեղ թշնամին թողեց գնեքերի արտիլերիական պահեստներ: Թիւրքերը այ-րեցին երեք մեխիքներ և հայոց եկեղեցին պաշարեղենների պահեստներով: Բալարճիկի եկեղեցու հրեշտը հանգցրեց բնակիչները:

Дозволено Цензурою 22 Января 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіянца